

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՄԱՍԻՆ**

Արդի աշխարհում ցանկացած երկիր, անկախ իր հասարակարգի և մասնավորապես տնտեսակարգի առանձնահատկություններից, պարբերաբար պետք է անցկացնի մարդահամարներ: Այդ մասին ամրագրված է նաև ՄԱԿ-ի համապատասխան հանձնարարականներում:

Մարդահամարները բարդ վիճակագրական աշխատանքներ են, որոնց իրականացումը կապված է մեթոդաբանական և կազմակերպչական բազմաթիվ հարցերի, մարդահամարային անձնակազմի զգալի թվաքանակի ներգրավման հետ: Դրա համար, ըստ նախօրոք մշակված պլանի, յուրաքանչյուր մարդահամարի անցկացմանը նախորդում է մանրակրկիտ նախապատրաստում:

Ցանկացած երկրի համար մարդահամարների անցկացումն ունի սոցիալական, ժողովրդագրական, տնտեսական, իսկ նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար նաև քաղաքական մեծ նշանակություն:

Մարդահամարները հնարավորություն են տալիս մանրամասն տվյալներ ստանալ բնակչության թվաքանակի, նրա տեղաբաշխվածության, սեռատարիքային կազմի, ամուսնական վիճակի, կրթական մակարդակի, ազգության, գոյության միջոցների աղբյուրների, զբաղվածության, տնային տնտեսությունների բնակության պայմանների և այլ բնութագրերի վերաբերյալ: Բնակչության վերաբերյալ ստացված բազմաբնույթ տեղեկությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու տվյալ երկրի հասարակական ու տնտեսական զարգացման մակարդակը և կանխորոշելու հետագա առաջընթացի նոր ուղղություններն ու սկզբունքները:

Ժողովրդագրական ցուցանիշների դինամիկան ունենալու համար՝ մարդահամարները սովորաբար անցկացվում են պարբերաբար՝ ժամանակի հավասար միջակայքերում, որպես կանոն, տասը տարին մեկ անգամ, իսկ մի շարք երկրներում՝ նույնիսկ հինգ տարին մեկ:

Խորհրդային Միության վերջին մարդահամարից հետո անցել էր ավելի քան 16 տարի և այդ ժամանակաընթացքում Լեռնային Ղարաբաղում տեղի էին ունեցել քաղաքական, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական լուրջ փոփոխություններ, որոնք մարդահամարի անցկացումը դարձրել էին անխուսափելի:

Տնտեսական և քաղաքական կարևորությամբ, ծրագրային համընդհանրությամբ առանձնանում է 2005 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացված մարդահամարը: Ամենից առաջ այդ մարդահամարը Լեռնային Ղարաբաղի անկախության պայմաններում անցկացված առաջին մարդահամարն է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար առաջին մարդահամարի անցկացումը ժամանակի հրամայական էր: Նախ՝ խախտվել էր տասը տարին մեկ անցկացվող մարդահամարների հաջորդականությունը, միաժամանակ դարաբաղյան հակամարտության հետևանքով առաջացել էին մեծ միգրացիոն տեղաշարժեր: Հետո էլ՝ ազատական տնտեսակարգին անցնելու շրջանում Լեռնային Ղարաբաղում տեղի էին ունեցել քաղաքական, տնտեսական և սոցիալական խորը վերափոխումներ և այդ գործընթացները վերլուծելու, գնահատելու և կառավարելու համար պահանջվում էր ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն բնակչության թվաքանակի, աշխարհագրական տեղաբաշխման, նրա սոցիալ-ժողովրդագրական, զբաղվածության, տնային տնտեսությունների բնակության պայմանների և այլ բնութագրերի վերաբերյալ: Իսկ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական կտրվածքներով ու հատկանիշներով ամբողջական տեղեկություններ ստացվում են միայն մարդահամարների անցկացման արդյունքում:

Մարդահամարի իրավական դաշտն ապահովելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2001թ. նոյեմբերի 30-ին ընդունվեց «Մարդահամարի մասին»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, համաձայն որի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մարդահամարի անցկացման ժամկետը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը 2004թ. նոյեմբերի 16-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005 թվականին մարդահամար անցկացնելու մասին» թիվ 451 որոշմամբ առաջին մարդահամարի անցկացման ժամկետը սահմանեց 2005թ. հոկտեմբերի 18-27-ը ներառյալ, իսկ դրան նախորդող փորձնական մարդահամարի անցկացման ժամկետը՝ 2005թ. մարտի 21-30-ը ներառյալ: Փորձնական մարդահամարն անցկացվեց Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի շրջանի Նորագյուղ և Մարտակերտի շրջանի Ներքին հողաթաղ գյուղերում՝ ընդգրկելով հանրապետության բնակչության (ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական) ոչ պակաս, քան մեկ տոկոսը:

Մարդահամարի անցկացումն իրենից ներկայացնում է բազմաբնույթ և իրար հաջորդող, փոխկապակցված միջոցառումների շարք, որն իրականացվում է կառավարության, տարբեր շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների ու կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ: «Մարդահամարի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004թ. նոյեմբերի 16-ի թիվ 451 ու 2004թ. դեկտեմբերի 21-ի թիվ 518 որոշումների համաձայն, ստեղծվեցին 2005 թվականի մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական, շրջանային և Ստեփանակերտի քաղաքային հանձնաժողովները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի 2004թ. դեկտեմբերի 10-ի թիվ 1 որոշմամբ հաստատվեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ծրագիրը»:

Պարբերաբար հրավիրվող համապետական հանձնաժողովի նիստերում քննարկվում էին մարդահամարի կազմակերպմանն առնչվող հարցեր, ընդունվում որոշումներ, առաջարկություններ ներկայացվում շրջանային վարչակազմերին և Ստեփանակերտի քաղաքապետարանին, ինչպես նաև՝ շահագրգիռ նախարարություններին, գերատեսչություններին ու կազմակերպություններին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005 թվականի մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության (ԼՂՀ ԱվԾ) նախագահը հանդիպումներ են ունեցել հանրապետության բոլոր շրջանային վարչակազմերում: Միաժամանակ, շրջանային վարչակազմերում ԼՂՀ ԱվԾ կողմից կազմակերպվել և անցկացվել են հանդիպումներ հանրապետության բոլոր համայնքների ղեկավարների հետ: Հանդիպումների ընթացքում ընդգծվել է մարդահամարի անցկացման անհրաժեշտությունն ու կարևորությունը, ինչպես նաև տրվել են որոշ մեթոդաբանական պարզաբանումներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004թ. դեկտեմբերի 21-ի թիվ 519 որոշմամբ հաստատվեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005 թվականին անցկացվելիք մարդահամարի ծրագիրը (հարցաշարը)»:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշումներով հաստատվեցին և որպես նորմատիվային ակտեր գրանցվեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունում մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործընթացները կանոնակարգող մարդահամարային փաստաթղթերը :

2005թ. հունիս-հուլիս ամիսներին ԼՂՀ ԱվԾ աշխատակազմի տարածքային բաժինների

կողմից քաղաքներում տների (շինությունների) և գյուղական բնակավայրերի ցուցակների, համապատասխան քարտեզագրական նյութերի, ինչպես նաև ծանրաբեռնվածության սահմանված նորմաների հիման վրա նախապատրաստվեց և կազմվեց շրջանների, իսկ մարդահամարի վարչության կողմից՝ ամփոփ կազմակերպման պլանները: Ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման ամփոփ կազմակերպման պլանի, հանրապետության ողջ տարածքը բաժանվեց 11 մարդահամարի, 85 հրահանգչական, 462 հաշվային տեղամասերի:

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2005 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների ծրագրի, նախապատրաստական աշխատանքների հաջորդ փուլով իրականացվեց կազմակերպման պլանով հաստատված աշխատողների հավաքագրումը: Ընդհանուր առմամբ, 2005թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին ժամանակավոր աշխատանքի ընդունվեց մոտ 600 մարդ:

2005թ. հոկտեմբերի 18-27-ը ներառյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անցկացվեց մարդահամար՝ հաշվարարների կողմից մարդահամարի հարցաթերթերը հարցման եղանակով լրացնելու միջոցով (տես հարցաթերթը):

Ողջ հանրապետությունում բնակչությունը հաշվեգրվեց հատուկ սահմանված պահի՝ հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշերի՝ ժամը 24:00-ի դրությամբ:

2005թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացվեց մարդահամարի հսկիչ թերթերի և վերահսկիչ փաստաթղթերի ստուգման և մարման աշխատանքը՝ ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի տարածքային բաժիններում և մարդահամարի վարչությունում:

Մինչև 2005թ. նոյեմբերի 26-ն իրականացվեց մարդահամարի նյութերի (հարցաթերթեր, ուղեկցող թերթեր և ամփոփագրեր) տեղափոխումը հանրապետության շրջաններից ԼՂՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչություն:

2005թ. դեկտեմբերից մինչև 2006թ. ապրիլն իրականացվեց մարդահամարի հարցաթերթի համապատասխան հարցերի ծածկագրման և մուտքագրման աշխատանքները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մարդահամարի ելքային աղյուսակներն ստացվեցին IMPS ծրագրային փաթեթի CENTS ծրագրով, որոնք մշակվել են ՄԱԿ-ի հանձնարարականներին համապատասխան:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մարդահամարը մեր երկրի պատմության մեջ անկախության պայմաններում անցկացված առաջին մարդահամարն էր, որը, որպես բնակչության մասին ճշգրիտ և հավաստի տեղեկությունների հիմնական աղբյուր, հնարավորություն տվեց ստանալ բնակչության մասին մանրամասն տվյալներ հանրապետության, շրջանների և բնակավայրերի մակարդակով:

ԼՂՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաստատված է՝ ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 25.01.2005թ. № 7 որոշմամբ

ՀԱՐՅԱԹԵՐԹ №

ԼՂՀ 2005 թվականի հոկտեմբերի 18-27-ը «Մարդահամարի մասին» ԼՂՀ օրենքի և ԼՂՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 16-ի «ԼՂՀ-ում 2005 թվականին մարդահամար անցկացնելու մասին» թիվ 451 որոշման համաձայն անցկացվող մարդահամարն առաջինն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմության մեջ:

«Մարդահամարը կրում է պարտադիր բնույթ և հարցվողները պարտավոր են ճշգրիտ ու սպառիչ պատասխաններ տալ մարդահամարի արցաթերթի բոլոր հարցերին:

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալ մարդահամարի հարցաթերթում գրանցված իր մասին տեղեկություններին»:

«Մարդահամարի մասին» ԼՂՀ օրենք հոդված 10:

«Մարդահամարի վերջնական արդյունքներն օգտագործվում կամ հրապարակվում են միայն ամփոփված և խմբավորված տեսքով:

Մարդահամարի սկզբնական (անհատական) տվյալները գաղտնի են և հրապարակման ենթակա չեն»:

«Մարդահամարի մասին» ԼՂՀ օրենք հոդված 12:

«Մարդահամարի հարցաթերթի հարցերին պատասխանելուց հրաժարվելն առաջացնում է պատասխանատվություն՝ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

«Մարդահամարի մասին» ԼՂՀ օրենք հոդված 13:

Ծնորհակալություն
 համագործակցության համար
 ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն

Մարդահամարի տեղամաս

Հրահանգչական տեղամաս

Հաշվային տեղամաս

Բնակելի միավոր №

Շրջան

Համայնք

Բնակավայր

Պողոտա, փողոց, նրբանցք

Տան/շենքի համարը կամ
 Տանտիրոջ ազգանունը

Բնակարանի համարը Հնրայտսի համարը

Կազմակերպության անվանումը

Հաշվարար՝

...../անունը, ազգանունը / /խտորագրությունը / /լրացման ամսաթիվը/

Հրահանգիչ-հսկիչ՝

...../անունը, ազգանունը / /խտորագրությունը / /լրացման ամսաթիվը/

Տնային տնտեսության բնակության պայմանները

Բ.1. Բնակելի միավորով
 արտահսկվածությունը

Ունի Չունի Անօթևան

Բ.2. Բնակելի շինություն տեսակը

Անհատական տուն
 Անհատական տան մաս
 Առանձին բնակարան
 Ընդհանուր (կոմունալ) բնակարան
 Տնակ, ժամանակավոր կացարան
 Հանրակացարան
 Համատեղ բնակության կազմակերպություն (ինստիտուցիոնալ)
 Այլ բնակելի շինություն

Բ.3. Ե՞րբ է կառուցվել

Մինչև 1945թ.
 1946-1965թթ.
 1966-1985թթ.
 1986-1995թթ.
 1996-2005թթ.

Բ.4. Շինության արտաքին
 պատկերի շինանյութը

Քար, աղյուս
 Երկաթբետոն, բլոկ
 Փայտ
 Խտանակազմ նյութ
 Այլ

Բ.5. Ձևաուցման հիմնական աղբյուրը

Կենտրոնական ջեռուցում
 Գազ
 Էլեկտրակազմություն
 Ամուխ
 Փայտ
 Աբար
 Նավթ, նավթամթերք
 Այլ

Բ.6. Կենտրոնական պատրաստում
 հիմնական վտակիչը

Էլեկտրակազմություն
 Գազ
 Նավթ
 Փայտ
 Այլ

Բ.7. Ձյունատաքարսրման
 հիմնական աղբյուրը

Ձրմուղ բնակելի միավորում
 Ձրմուղ շենքում, բայց ոչ բնակ. մ-ում
 Հասարակական ջրմուղ
 Ձրակուտակման անհատական բար
 Գետեր, աղբյուրներ
 Ձրիոր
 Այլ

Բ.8. Առկա՞ է արդյոք լուսատեղակ
 կամ ցնցոտ

Այո, բնակելի միավորում
 Այո, շենքում, բայց ոչ բնակմիավորում
 Այո, շենքից դուրս
 Այլ

Բ.9. Առկա՞ է արդյոք գուգարան
 ընդդվող

Բնակելի միավորում
 Բնակմիավորից դուրս, միայն տվյալ տն. տնտ.
 Բնակմիավորից դուրս, ընդհանուր օգտագործման համար
 Միայն տվյալ տնային տնտեսության համար
 Ընդհանուր օգտագործման համար
 Այլ

Բ.10. Բնչպե՞ս է կառուցվում
 տեղանիմունքը

Շենքի աղբատար խողովակով

Կանոնավոր հեռացվող
 Անկանոն հեռացվող
 Թափվում է կանոնավոր հեռացվող աղբարկղը
 Թափվում է անկանոն հեռացվող աղբարկղը
 Թափվում է պատահական
 Այլ

Բ.11. Ը՞ր՞ն է լուսավորման
 հիմնական աղբյուրը

Էլեկտրակազմություն
 Այլ

Բ.12. Առկա՞ է արդյոք հնախա
 տեղանիմունք

Այո
 Ոչ

Բ.13. Ու՞մ սնկախառնությունն է

Տվյալ տն. տնտ. անդամի
 Պետության
 Համայնքի
 Իրավաբանական անձի
 Այլ անձանց

Բ.14. Ընտե՞ր սննդակ է գրտեղնում
 Ձեր տնային տնտեսությունը

Առանձին

Այլ տն. տնտեսության հետ համատեղ

Բ.15. Ըրքա՞ն է Ձեր բնակմիավորի
 մակերեսը

Ընդհանուր

Բնակելի

Փնտրվող հաճախորդի անունը	<p>Հ.1.Թվարկեր խնդրեմ հաշվառման պահին Չեր տնային տնտեսության անդամների (ներկա և բացակա), ինչպես նաև ժամանակավոր ներկա գտնվող անձանց</p> <p>Ազգանունը,անունը, հայրանունը</p>	<p>Հ.2 Մարդկահամարի հաշվառման պահին եղե՞լ եք:</p>	<p>Հ.3 Տնտեսությունը (ամիսներով)</p>	<p>Հ.4 Մուտքագրողը, նույնտնտեսությունը</p>	<p>Բացակայությամբ կամ ժամանակավոր ներկա գտնվելու դեպքում</p>	<p>Բացակայողի համար</p>	<p>Ժամանակավոր ներկա գտնվողի համար</p>	<p>Լրացվում է բոլոր տարիքի անձանց համար</p> <p>Լրացվում է բոլոր կատեգորիաների անձանց համար</p>						
					<p>Հ.5 Որտե՞ղ է գտնվել մարդահամարի հաշվառման պահին (հոկտեմբերի 17-ի լոյս 18-ի 00 ժամին)</p> <p>Լեռնային Ղարաբաղի դեպքում շրջանը, այլ դեպքում՝ երկիրը</p>	<p>Հ.6 Որտե՞ղ եք սովորաբար դուք բնակվում</p> <p>Լեռնային Ղարաբաղի դեպքում շրջանը և բնակավայրը, այլ դեպքում՝ երկիրը</p>	<p>Հ.7 Չե՞ր ազգակցություն ունեցնե՞ք անձինքնուրույնը</p>	<p>Սուր(հոր) ինքնավան համարը</p>	<p>Մը</p>	<p>Հ.9 Չե՞ր ծննդյան</p>			<p>Տարիքը լրացած տարիներով</p>	<p>Հ.10 Չե՞ր ծննդավայրը</p>
					<p>Լեռնային Ղարաբաղի դեպքում շրջանը և բնակավայրը, այլ դեպքում՝ երկիրը</p>	<p>Լեռնային Ղարաբաղի դեպքում շրջանը և բնակավայրը, այլ դեպքում՝ երկիրը</p>	<p>Այլ</p>	<p>Հ.8 Չե՞ր սեռը</p>	<p>Օրը</p>	<p>Ամիսը</p>	<p>Տարին</p>	<p>Լեռնային Ղարաբաղի դեպքում շրջանը և բնակավայրը, այլ դեպքում՝ երկիրը</p>		

Ա	1	2	3	4	5	6	7ա	7բ	8	9ա	9բ	9գ	9դ	10
1														
2														
3														
4														
5														
6														
7														
8														
9														
0														

Ընդամենը

--	--

Ներկա՝
մշտապես.....1
ժամանակավոր.....2
Բացակա.....3

Աշխատանք.....1
Ընտանեկան.....2
Ուսում.....3
Հյուր.....4
Գործուղում.....5
Զբոսաշրջիկ.....6
Այլ.....7

Տնային տնտեսությունում առաջինը գրված անձ.....01
Կինը,ամուսինը.....02
Աղջիկը,տղան.....03
Մայրը,հայրը.....04
Քույրը,եղբայրը.....05
Սկեսուրը,սկեսրայրը,զոջանը,անները.....06
Հարսը,փեսան.....07
Տատը,պապը.....08
Թոռը.....09
Այլ ազգական.....10
Ոչ ազգական.....11
Սենյակակից.....12
միայն խմբային տնտեսությունների համար

Զ. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
ԼՂՏ մայրաքաղաք

Տարածքը	25.66 քառ. կմ
---------	---------------

Ստեփանակերտը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքն է: Որպես քաղաքատիպ բնակավայր հայտնի է 1847 թվականից: Իսկ մինչև այդ հին հայկական բնակավայր էր՝ Վարարակն անվամբ, որն ունի ավելի քան երկուհազարամյա պատմություն: Հենց այս գյուղում 1840-ական թվականներին ստեղծվել է ժուսական բանակի զորակայան՝ ռազմական, վարչական, բնակելի շինություններով, որոնք էլ հիմք են հանդիսացել այժմյան քաղաքի ձևավորման համար: Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց և երկրամասը ինքնավար մարզ հռչակվելուց հետո, 1923 թվականին 26 կոմիսարների առաջնորդ, Բաքվի կոմունայի ղեկավար Ստեփան Ծահումյանի հիշատակը հավերժացնելու համար այս բնակավայրը վերանվանվում է Ստեփանակերտ:

Մինչև 1978թ. մարզային վարչական կենտրոն լինելուց բացի, նաև համանուն շրջանի կենտրոնն էր: 1978թ. հետո Ստեփանակերտի շրջանը վերանվանվում է Սակերանի շրջան, իսկ շրջանի կենտրոնն է դառնում Սակերան ավանը:

Ստեփանակերտը ԼՂՏ նախագահի նստավայրն է: Մայրաքաղաքում են գտնվում ԼՂՏ Ազգային ժողովն ու կառավարությունը, բոլոր նախարարություններն ու գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունները, տարբեր միությունները, հիմնադրամները, դատախիրավական մարմինները, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը և այլն:

Մայրաքաղաքում գործում են Լեռնային Ղարաբաղում միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Ստեփանակերտը հանրապետության խոշոր տնտեսական, ինչպես նաև կրթական, մշակութային կենտրոնն է:

ԼՂՏ 2005թ. մարդահամարի արդյունքներով բնակչության թվաքանակը կազմել է 49986 մարդ: Մայրաքաղաք Ստեփանակերտը բնակչության թվաքանակով ամենախոշորն է հանրապետությունում՝ ընդգրկելով հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի ավելի քան մեկ երրորդը: